DOI: 10.57192/18291864-2025.2-222

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
ararathakobyan47@gmail.com
ORCID: 0009–0005–8875–5970

ԽՈՀԵՐ ԿԱՐՈ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԱՄԵՆԱՂԵԿԱՎԱՐԸ՝ ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ամփոփում



Բեյրութի «Վահէ Սեթեան» հրատարակչությունը լույս է ընծայել XX դարի երկրորդ կեսի ականավոր ազգային -քաղաքական գործիչ, ՀՅԴ գաղափարախոս և հրապարակագիր **Սարգիս Զեյթլյանի** (1930–1985 թթ.) կյանքի ու գործունեության համակողմանի քննությանը նվիրված պատմաբան **Կարո Հովհաննիսյանի** մենագրությունը:

Սա հեղինակի աշխատության Ա հատորն է, որն ընդգրկում է Ս. Զեյթլյանի կյանքի ու գործունեության մինչև 1966 թ. պատմաշրջանը, ուստի ծրագրված է սույն աշխատության Բ հատորյակի տպագրությունը, որը բովանդակելու է 1966–ից մինչև նրա մահը (1985 թ.) գործունեության ամբողջական համայնապատկերը (Յովհաննէսեան, 2025, 11):

Ներկա հրապարակման մեջ ներկայացրել ենք Կ. Հովհաննիսյանի վերլուծություններն ու գնահատականները Ս. Զեյթլյանի հարուստ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.06.2025:

կյանքի ու բեղուն գործունեության վերաբերյալ: Ըստ անհրաժեշտու թյան բերելու ենք նաև մեր դիտարկումներն ու պարզաբանումները:

Վերոնշյալներից հիմնականն այն է, որ **ՀՅԴ գաղափարաբա-նության մայր երակից սնված Սարգիս Զեյթլյանը 20-րդ դարի երկ-րորդ կեսի սկզբունքորեն նոր պայմաններում ամբողջացրեց ու ըն-դարձակեց Հայ Դատի ռազմավարական առաջադրանքների շրջա-նակը՝ նրանում ներառելով հայկական անկախ պետականության վերականգնման գաղափարի նյութականացման խնդիրը, ուստիև դարձավ հայ ազգային գաղափարախոսության ամենաակնառու կրողն ու արմատավորողը սփյուռքյան պայմաններում:**

Ընթերցողների դատին հանձնված մենագրությունն իր տեսակի մեջ առաջինն է՝ նվիրված մեծ հայրենասեր ու ականավոր տեսաբան Ս. Զեյթլյանի կյանքին ու գործին: Ցավոք, նա ապրեց ընդամենը 55 տա-րի, բայց այդ ընթացքում հասցրեց խորը հետք թողնել հայ քաղաքա-կան մտքի պատմության մեջ: Կարելի է կռահել, որ աշխատությունը նվիրված է սփյուռքյան մեծ մտավորականի ու գործչի նահատակու-թյան 40-ամյա տարելիցին: Ուստի այն կոչված է վերականգնելով ամ-բողջական ճշմարտությունը՝ Սարգիս Զեյթլյանի երբեք չխամրող գա-ղափարների ներկայացման միջոցով ամրապնդելու Սփյուռք-Հայաս-տան մտավոր, հասարակական-քաղաքական և հոգևոր կապերը:

Բանալի բառեր – Զեյթլյան, Պէյրութ, ՀՅԴ գործիչ, Կահիրե, հրապարակախոս, «Յուսաբեր», «Ազդակ», Հայ Դատ, Կարո Հովհան-նիսյան, Մուսալեռ, Նշան Փալանճեան, անկախ պետականության գաղափար:

Ararat M. Hakobyan
Doctor of Sciences in History

REFLECTIONS ON KARO HOVHANNISYAN'S WORK "THE SUPREME LEADER: SARKIS ZEITLIAN"

Abstract

Beirut's national publishing house "Vage Setyan" has published a monographic work by historian **Garo Hovhannisyan**, dedicated to one of the major figures of the ARF in the second half of the 20th century, a member of the

ARF Bureau, a national public and political figure of the diaspora, editor-in-chief of the periodicals "Yusaber", "Azdak", "Azdak Shabatoryak-Droshak", to the ideologist and publicist of the ARF, a critical history of the life and fruitful work of **Sargis Zeitlian** (1930-1985), the son and descendant of a brave Musaler resistance fighter. This is Volume A of the author's planned work, covering the period of his life and work up to 1966. As a continuation of this: the author has conceived of preparing Volume B of this work, dedicated to the life and work of S. Zeitlian, which will present a comprehensive panorama his political, journalistic, party-organizational activities from 1966 until his death (1985) (Oganesyan, 2025, 11).

In this review, we have presented not only the approaches, analyses and assessments of K. Oganesyan regarding the life and multifaceted activities of S. Zeitlyan, but also, as necessary, have tried to give our own observations and explanations on many issues raised in the editorial and journalistic materials of the ideologist and activist of the ARF. S. Zeitlian expanded the framework of the Armenian Question (Hay Dat) at the programmatic level, including by implementing the idea of restoring the free, independent statehood of the Armenian people. At one time, he can be considered one of the founders of the Armenian national ideology in the diaspora under the new conditions.

The monograph presented to the readers is the first of its kind dedicated to the life and work of the great patriot and ideologist S. Zeitlyan. Unfortunately, he lived a relatively short life - only 55 years. The thread of his life was broken at the very height of his intellectual productivity and public engagement, by malicious kidnapping and vile murder, which has not yet been clearly and thoroughly solved. It can be assumed that this work is specially dedicated to the 40th anniversary of the martyr of the great intellectual and Diaspora figure, as a sign of his bright and immortal memory. We also believe that this volume is called upon to strengthen the intellectual, socio-political and spiritual ties between the Diaspora and Armenia.

Key words- Sarkis Zeitlyan, Beirut, ARF activist, Caire, publicist, Yusaber, Azdag, Ay Dat, Karo Oganesyan, Musaler, Nshan Palandjyan, idea of independent statehood.

Арарат М. Акопян
Доктор ист. наук

РАЗМЫШЛЕНИЯ О ТРУДЕ КАРО ОВАННИСЯНА «САРКИС ЗЕЙТЛЕАН – ВСЕРУКОВОДИТЕЛЬ»

Резюме

Бейрутское издательство «Ваге Сетян» выпустило монографию историка **Каро Ованнисяна**, в которой подробно исследуется жизнь и деятельность выдающегося национального и политического деятеля второй половины XX в. **Саркиса Зейтляна** (1930-1985 гг.).

Это первый том исследования, охватывающий жизнь и деятельность С. Зейтляна до 1966 г. Второй том планируется к публикации; он будет описывать политическую деятельность С. Зейтляна с 1966 г. по 1985 г. – до его смерти. В этой рецензии мы не только рассмотрели подходы, анализ и оценки К. Ованнисяна о жизни и деятельности С. Зейтляна, но и поделились собственными наблюдениями и добавили разъяснения по ключевым вопросам. Одной из основных идей является та, что С. Зейтлян расширил рамки Армянского вопроса (Ай дат) на программном уровне, в том числе и через реализацию идеи восстановления суверенного и независимого армянского государства. Именно поэтому он стал одним из создателей армянской национальной идеологии в Диаспоре.

Монография, представленная на суд читателей, стала первой в своем роде, раскрывающей жизнь и деятельность великого патриота и идеолога С. Зейтляна. К сожалению, он прожил сравнительно короткую жизнь – всего 55 лет. Можно предположить, что эта книга вышла в свет к 40-летию его мученической смерти, которое стало трагическим событием для Диаспоры. Мы также уверены, что этот труд призван укрепить интеллектуальные и духовные связи между Диаспорой и Арменией, а также усилить их общественно-политическое единство.

Ключевые слова – Саркис Зейтлян, Бейрут, деятель АРФД, Каир, публицист, «Юсабер», «Аздак», Армянский вопрос (Ай Дат), Каро Ованнисян, Мусалер, идея независимой государственности.

Մուտք

Սփյուռքահայ մտավորական, պատմաբան Կ. Հովհաննիսյանի՝ Սարգիս Զեյթլյանի կյանքին ու գործին նվիրված մենագրական աշխատությունը բաղկացած է երեք բաժիններից (գլուխներից), վերջաբանից և հավելվածից, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից (Յովաննէսեան, 2025): Գրքի հեղինակը իր առջև դրված խնդիրները լուծելու համար առատորեն օգտվել է Զեյթլյանի անձնական արխիվի, Անթիլիասի հոգևոր կենտրոնի, Կահիրեի, Այնճարի, Բոստոնի, Չիկագոյի փաստաթղթերից ու բազմաբնույթ վավերագրերից, նամակագրությունից, տեղեկագրերից, որոնցում տեղ են գտել Ս. Զեյթլյանի հրապարակումներն ու նրա հետ կապված տարատեսակ նյութերը: Բացի այդ՝ աշխատության մեջ ըստ հարկի օգտագործված են տարբեր հեղինակների հուշերը, ինչպես նաև «Սարգիս Զէյթլեան դատը» ժողովածուն (Սարգիս Զէյթլեան դատը, 1994): Եվ այդ ամենը մեծ ջանասիրությամբ ու նվիրումով ի մի է բերել Կ. Հովհաննիսյանը՝ իբրև գնահատանք իր ուսուցչի հանդեպ: Այս բոլոր սկզբնաղբյուրները գրախոսվող մենագրության համար ապահովում են գիտական հիմք ու հարուստ բովանդակություն:

Բացի այդ՝ ի մի են բերվել, և քննության են առնվել հատկապես «Յուսաբեր», «Ազդակ», «Ազդակ շաբաթօրյակ-Դրօշակ» պարբերականներում Ս. Զեյթլյանի ստորագրությամբ, կամ էլ **Ս. Զ.** ու **Ս. Կալեան** ծածկանուններով խմբագրականներում և հոդվածներում առաջ քաշված մտքերն ու դատողությունները:

Վերը նշվածից զատ՝ Կ. Հովհաննիսյանը հատորյակում կատարել է մի շարք պարզաբանումներ ու ճշգրտումներ՝ ա) Զեյթլյանի կյանքին առնչված թվականների ու տեղեկությունների, բ) 1955-1963 թթ. «Յուսաբեր»-ի և 1965/66 թթ. «Ազդակ»-ի խմբագրություններում աշխատելու ընթացքում նրա ունեցած ներդրման անհայտ մնացած հանգամանքների, գ) Ս. Զեյլթլյանի ուսումնակրթական ոլորտում ունեցած, բայց անհրաժեշտ չափով չգնահատված վաստակի վերաբերյալ (Յովհաննէսեան, 2025, 12): Հարկ է ընդգծել, որ Կ. Հովհաննիսյանը բարեխղճորեն է կատարել իր ուսուսչապետի հանդեպ ունեցած բարոյական պարտքը: Այդ ամենից զատ՝ Կ. Հովհաննիսյանի գրքին առանձնա-

հատուկ շուք են հաղորդում նրանում զետեղված անհատական ու խմբակային լուսանկարները:

1. Կյանքի ու գործունեության համապատկերը

Սարգիս Թովմասի Ջեյթլյանը ծնվել է 1930 թ. Մուսալեռ գավառակի Խտըրբեկ գյուղում՝ Մուսա լեռան հերոսամարտերին գործուն մասնակցություն ունեցած ընտանիքում: Այսպես, նրա մեծ մայրը՝ Վարդերը ազատամարտիկների կողքին կռվել է 1915 թ. Մուսա լեռան հայտնի ինքնապաշտպանական մարտերում: Հայրը՝ Թովմասը, ով հերոսամարտի օրերին տակավին պատանի էր, կատարել է սուրհանդակի դեր: Իսկ այդ դեպքերից երեք տարի անց նա միացել է ֆրանսիական հրամանատարության ներքո կազմված Հայկական լեգեոնին ու մասնակցել 1918 թ. սեպտեմբերի 18-19-ի Արարայի հաղթական ճակատամարտին (www.aztadaly.com): Դառը ճակատագրի բերումով՝ 1939 թ. Թովմասի ընտանիքը դառնում է տարագիր և հաստատվում Լիբանանի Այնճար կոչված ամայի դաշտում, որը Գալուստ Գյուլպենկյան հիմնարկությունը գնել և տրամադրել էր Ալեքսանդրետի հայ գաղթականներին (Յովհաննէսեան, 2025, էջ 19):

Գրքի հեղինակը իր ձեռքի տակ եղած վավերագիր նյութերով ու հիշողություններով հանգամանորեն ներկայացրել է Այնճարի բնակեցումը և հայ կյանքի զարթոնքը այդ անմշակ երկրամասում: Կ. Հովհաննիսյանի բնութագրմամբ՝ պատանի հասակից Ջեյթլյանը իր ոգով ու էությամբ իրապես մուսալեռցի էր: 1943-ից պատանի Սարգիսը սկսում է հաճախել նոր հիմնված գյուղավանի Ազգային «Յառաջ» վարժարանը (նախակրթարանը), որը 1946 թ. հաջողությամբ ավարտելով՝ նույն տարում ընդունվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքության Ս. Հակոբյանց «Ժառանգավորաց» վարժարանը, որում ուսուցչություն էր անում ճանաչված գրող Հակոբ Օշականը (Յովհաննէսեան, 2025, 29): Գրքում Սարգսի պատանեկան կյանքը և ուսումնառությունը ներկայացված է գրական-գեղարվեստական ընդմիջարկումներով, կրթօջախի սաների խմբապատկերներով:

1950 թ. ավարտելով Երուսաղեմի «Ժառանգավորաց»-ը՝ նա վերադառնում է Այնճար և նույն տարում իր երկու մուսալեռցի ընկերների հետ հաճախում է Բեյրութի Համազգայինի «Նշան Փալանճեան» ճեմարան, որի տնօրենը սկզբում Լևոն Շանթն էր, իսկ հետագայում՝ Սիմոն Վրացյանը, ով իր իսկ խորիմաստ բնութագրմամբ՝ «վարչապետական

աթոռից անցավ վարժապետական աթոռի» (Վրացեան, 2007, 7)[1]: Կ. Հովհաննիսյանը նկատել է տալիս, որ եթե Երուսաղեմի «Ժառանգավորաց» վարժարանում զգացվվում էր ուսուցչապետ Հ. Օշականի ազդեցությունը, ապա Բեյրութի «Նշան Փալանճեան» ճեմարանում անխաթար կերպով պահպանվում էր Շանթ-Աղբալյանական գրական մթնոլորտի ոգին, թեև 1947-ին Ն. Աղբալյանն արդեն վախճանվել էր (Յովհաննէսեան, 2025, 42): Հարկ է նկատել, որ այստեղ Ս. Զեյթլյանը անմիջականորեն հաղորդակից է եղել Հայաստանի Հանրապետության պետական ու մշակութային գործիչների հետ, ովքեր մեծապես նպաստել են երիտասարդ մտավորականի աշխարհայացքի ու ազգային-քաղաքական նկարագրի ձևավորմանը: Իսկ 1940-1960-ական թվականներին ճեմարանում դասավանդել են Ն. Աղբալյանի, Լ. Շանթի, Մ. Իշխանի, Գ. Գյոզալյանի, Խ. Գաբիկյանի, Կ. Սասունու, Գ. Լազյանի նման պայքարի բովով անցած, մեծ մասամբ եվրոպական բարձր կրթություն ստացած մտավորականներ ու գործիչներ, ովքեր ոչնչով չէին զիջում Երևանի պետական համալսարանի՝ բանֆակն ավարտած դասախոսներին: Կ. Հովհաննիսյանը գրում է, որ Ս. Զեյթլյանը հատկապես Լ. Շանթի, Ն. Աղբալյանի և Ն. Ադոնցի գործերի խենթ սիրահարն էր:

Մենագրությունում արձանագրված է, որ 1953 թ. հունիսին Ս. Զեյթլյանը ավարտել է «Նշան Փալանճեան» ճեմարանը և հենց Ս. Վրացյանի ձեռքից է ստացել ավարտական վկայականը: Ավելի ուշ՝ 1961 թ. փետրվարի 27-ին, Կահիրեից Ս. Վրացյանին ուղղված նամակում նա գրում էր, որ «ճշմարիտ երջանկութիւնս պիտի ըլլար, եթէ օր մը, իր կարգին, ճեմարանը ամօթ չզգար ինձմով» (Յովհաննէսեան, 2025, 776): Հավելենք, որ Զեյլթյանը Վրացյանի ձեռքից է ստացել նաև «Հայաստանի Հանրապետութիւն» հիմնարար աշխատությունը: Ընդգծենք, որ Ս. Վրացյանինն՝ ինքը բարձր որակներով է բնութագրել նրան՝ «Զէյթլեանի մէջ կը տեսնէր ազգային գործչի, մտավորականի, մանկավարժի, հարապարակագրի եւ իրաւ ղեկավարի յատկանիշներ» (Յովհաննէսեան, 2025, 60):

Ճեմարանն ավարտելով՝ Ս. Վրացյանի խորհրդով Զեյլթյանը պաշտոնավարեց Կահիրեի «Գալուստեան» վարժարանում՝ դասավանդելով հայագիտական բնույթի առարկաներ և զուգահեռաբար զբաղվելով լրագողական աշխատանքով՝ «Յուսաբեր» օրաթերթի խմբագրությունում (1954-1963 թթ.): Այստեղ նրա գաղափարական, ածին մե-

[1] Ի դեպ՝ Ս. Զեյլթյանը եղել է Ս. Վրացյանի մահվան (1969 թ.) դամբանախոսներից մեկը:

ծապես նպաստել են ՀՅԴ Կահիրեի (Եգիպտոս) պաշտոնաթերթ «Յուսաբեր»-ի խմբագրապետ, ճանաչված դաշնակցական գործիչ **Վահան Նավասարդյանը** (1886-1956 թթ.), ինչպես նաև խմբագիրներ Գ. Լազյանը և Բ. Թաշյանը: Այդ շրջանում Կահիրեն ՀՅԴ բյուրոյանիստ քաղաքն էր և 1955 թ այնտեղ է գումարվել ՀՅԴ ԺԶ (16-րդ) Ընդհ. ժողովը (Յովհաննէսեան, 2025, 76): Նավասարդյանի մահվանից մեկ-երկու տարի անց (1958 թ.) Զեյթլյանը ամբողջովին ստանձնում է «Յուսաբեր»-ի խմբագրապետի աշխատանքները և արդեն 1956 թ. նա ՀՅԴ Կահիրեի կոմիտեի անդամ էր:

1963 թ. ամռանը Զեյլթլյանը ընտանիքի հետ Եգիպտոսից վերադառնում է Լիբանան՝ հայրենի Այնճար, և մինչև 1965 թ. ստանձնում տեղի Ազգային «Յառաջ» բարձրագույն վարժարանի տնօրինությունը: Այնուհետև նա աշխատանքի է անցնում ՀՅԴ Լիբանանի ԿԿ-ի պաշտոնաթերթ «Ազդակ» օրաթերթում որպես խմբագրապետ: Ս. Զեյթլյանը, հետագա տարիներին ապրելով բուռն կուսակցական կյանքով, ՀՅԴ Ի (1972 թ.), ԻԱ)1978 թ.), ԻԲ (1981 թ.) Ընդհանուր ժողովներում ընտրվել է ՀՅԴ Բյուրոյի անդամ: ՀՅԴ Բյուրոյում նա 13 տարի եղել է Մամլո դիվանի պատասխանատուն, ժամանակի ոգուն համապատասխան՝ իր մասնակցությունն է բերել ՀՅԴ Ծրագրի վերամշակմանը: Հենց նա էր 1975 թ. սկսված Լիբանանի քաղաքացիական կռիվներում **դրական չեզոքության** մարտավարության մշակողներից մեկը (Յովհաննէսեան, 2025, 100-101): Առաջ գնալով նշենք, որ Ս. Զեյթլյանը 1968 թ. հիմնադրված ՀՅԴ Բյուրոյի «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ»-ում սկզբում խմբագրապետի օգնական էր, իսկ 1978-ից՝ խմբագրապետ մինչև իր առևանգումը՝ 1885 թ. մարտի 28-ին:

Գրախոսվող աշխատության Ա բաժինն ավարտվում է Զեյթլյանի կյանքն ընդհատած 1985 թ. մարտի 28-ի ահաբեկչության փաստի արձանագրումով: Հինգշաբթի գարնանային այդ օրը առավոտյան իր ընկերակից Կարո Քոլանճյանի հետ «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ» հանդեսի էջադրումը կատարելու համար Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան մեկնելու ճանապարհին առևանգվում է մի ոճրագործ զինյալ խմբի կողմից և սպանվում՝ առ այսօր էլ հստակորեն չբացահայտված հանգամանքներում և իր գործը թողնում է անկատար (Սարգիս Զէյթլեան դատը, 1994, 16):

2. Մանկավարժը եվ տնօրենը (կրթական հարցեր)

Ս. Ջեյթլյանի կողմից մանկավարժական ու կրթադաստիարակչական հարցերի քննությունը հիմնականում վերաբերում է այն շրջանին, երբ նա 1963 թ., Կահիրեից վերադարձավ 3 հազար բնակիչ ունեցող Այնճար գյուղաքաղաքը և ստանձնեց «Յառաջ» վարժարանի տնօրենի պաշտոնավարությունը, որը վարեց երկու տարի: Ջեյթլյանը և նրա սերունդը քաջ գիտակցում էին ազգային դպրոցի ու կրթության դերն ու նշանակությունը ազգային ինքնության պահպանության գործում: Այդ ճակատում կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվել է թարմացնել և նոր բովանդակություն հաղորդել ուսումնական ծրագրերին և ուսումնա-կազմակերպական աշխատանքներին: Ի վերջո, ինչպես փաստված է գրախոսվող մենագրությունում, «Յառաջ» կրթօջախը 1964/65 ուստարում ստանում է Բարձրագույն վարժարանի (քոլեջի) կարգավիճակ (Յովհաննէսեան, 2025, 109-137): Ի դեպ, հետաքրքիր է փաստել, որ այդ տարում Լիբանան է ժամանել ճանաչված հայագետ Մորուս Հասրաթյանը և «Յառաջ» քոլեջ-վարժարանում ներկայացել է դասախոսություններով (Յովհաննէսեան, 2025, 161): Տվյալներ են բերված, որ 1960-ականներին հյուրընկալ Լիբանանի Հանրապետությունում գործելիս են եղել 24 ազգային նախակրթարաններ, 3 վարժարան, «Նշան Փալանճյան» ճեմարանը և այլք, որոնց գործունեության համար նշանակալի է եղել մանկավարժ ու տնօրեն Ս. Ջեյթլյանի մասնակցությունը (Յովհաննէսեան, 2025, 177-178): Ս. Ջեյթլյանի դիտարկմամբ՝ հայ ժողովրդի գոյության և անկաշկանդ զարգացման գումարելիներն են հայ լեզուն, հայ մշակույթը, հայ գրականությունը (Յովհաննէսեան, 2025, 335): Բերված գումարելիներին կարելի է հավելել նաև՝ Հայոց պատմությունը:

Ս. Ջեյթլյանը տնօրեն լինելուն զուգահեռ՝ նաև դասավանդում էր «Հայոց պատմություն» առարկան: Իբրև նորույթ՝ կրթական ծրագրում ներառվեց նրա կազմած **Հայ Դատի** դասընթացը: Ս. Ջեյթլյանը Հայ Դատի, այսինքն՝ Հայկական հարցի ծնունդը սկսում էր Իսրայել Օրու գործունեությունից: Սա ինչ որ առումով միջին տեսակետ էր վաստակաշատ պատմաբան Լեոյի վիճարկելի՝ «Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը հայ ազգը» (Լեո, 2014, 24) և Հայկական հարցի ծագումը, որպես միջազգային դիվանագիտության հարց, 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագի՝ 16-րդ հոդվածի և դրա հետ անմիջականորեն կապված՝ Բեռլինի միջազգային խորհրդաժաղովի հետ կապելու արդի հայ պատմագրության մոտեցման միջև:

Գրականության հանդեպ վերաբերմունքի հարցում Զեյթլյանը մեծ տեղ էր տալիս XIX դ. հայկական ռոմանտիզմին: Գրական այդ ուղղության ականավոր դեմքերից էին Ռաֆֆին, Ռ. Պատկանյանը, Հ. Շիշմանյանը (Ծերենցը), ովքեր գաղափարական սնունդ են տվել ազգի ու հայրենիքի միասնության ու նրա ազատագրությանը հասնելու խնդրին: Դաշնակցական մտավորականը, բնականաբար, հետևել է իր կուսակցության այդ գաղափարական ակունքներին: Սակայն դրա կողքին մենագրության հեղինակը հավաստում է, որ Զեյթլյանը «Որեւէ ատեն Հայ յեղափոխութեան դաշնակցության քարոզչութիւն չըրաւ» (Յովհաննէսեան, 2025, 199): Կնշանակի՝ Զեյթլյանը գիտականորեն է մոտեցել Դաշնակցություն կուսակցության պատմությանը և նեղ կուսակցական քարոզչությամբ չի զբաղվել: Բայց դրա հետ միասին, նա առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել ՀՅԴ հիմնադիր Քր. Միքայելյանի կերպարի հանդեպ: Կ. Հովհաննիսյանը գրում է, որ Զեյթլյանը խորապես կպաշտեր Դաշնակցության հիմնադիրներից Քր. Միքայելյանին և նա քանիցս, նաև իր՝ գրախոսվող գրքի հեղինակի մասնակցությամբ կազմակերպել է Միքայելյանին նվիրված հուշ-երեկոներ, իսկ մամուլում հանդես է եկել հրապարակումներով (Յովհաննէսեան, 2025, 55):

«Յուսաբեր», հետո նաև «Ազդակ» օրաթերթերի խմբագրապետի պաշտոնը ստանձնած Ս. Զեյթլյանի համար հասարակական-քաղաքական թեմաներից զատ առաջնահերթ էին հայոց լեզվի ու մշակույթի պահպանման և զարգացման, ազգային ինքնության ամրապնդման հարցերը: Այդ առումով առօրեական խնդիրներից էր մամուլի միջոցով կապը բազմության հետ, հայապահպանության նվիրական գործը, մերձավորարևելյան հայ գաղութները հայության կյանքին ու գործունեությանը հաղորդակից դարձնելը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը, հայրենիքի պաշտամունքի, ազատության ու անկախության գաղափարները հայության մեջ վառ պահելը և այլն (Յովհաննէսեան, 2025, 245):

Ըստ այդմ՝ Զեյթլյանը տարբերակել է հայրենասիրության երկու ըմբռնում. մեկը՝ ներքուստ ազգային զգացում առաջացնող հայրենասիրությունն է, որը մնայուն է, բայց գոյություն ունի նաև արհեստական կամ պաշտոնական հայրենասիրություն: Իսկական հայրենասիրությունը հոգևոր զգացում է, մնայուն արժեք է, այն մարդու մոտ առկա է անկախ գոյություն ունեցող պետական ու քաղաքական վարչաձից և նման հայրենասերներն են, որ գնում են Հայրենիքի պաշտպանության և ազգային Ուխտի իրագործման ճանապարհով: Իսկ մյուսը՝

պաշտոնականը կեղծ հայրենասիրությունն է, երբ մարդը պարտադրված է դիմելու նման քայլի: Այս առումով Ջեյթլյանը նշում է, որ, օրինակ, Խորհրդային Հայաստանում «հայրենական» կոչված պատերազմում հայ զինվորականության հսկայական զանգվածները պարզապես հանդիսացել են Ի. Ստալինի և Լ. Բերիայի կամքի կատարողները (Յովհաննէսեան, 2025, 457–458):

Գրական-լրագրողական հետաքրքրությունների համատեքստում Ջեյթլյանը այցելել է «Բագին» ամսագրի խմբագրություն և մասնակցել է քննարկումներին, ջանացել է սերտացնել գրական կապերը Սփյուռքի և խորհրդահայ գրողների միջև՝ կարևորելով գրական-մշակութային կյանքի **ազգայնացումը**: Ջեյթլյանը հայ մշակույթի ազգայնացման կարևորագույն կռվանն էր համարում Քրիստոնեության պետական կրոն հռչակելը և այդ հենքի վրա հայ գրականության, լեզվի զարգացումն ու հարստացումը (Յովհաննէսեան, 2025, 600): Նա Խորհրդային Հայաստանի գրական ու հասարակական միջավայրում դիտարկում էր երկու Հայաստան: Ջեյթլյանի բնորոշմամբ՝ **դրանցից մեկը Չարենցների, Բակունցների, Սարմենների, Դաշտենցների, Սևակների և Շիրազների Հայաստանն է, իսկ մյուսը՝ Գր. Հարությունովների, Խ. Մուղդուսիների, Հ. Բաղդասարյանների և Յա. Զարոբյանների Հայաստանը** (Յովհաննէսեան, 2025, 585):

Իբրև Սփյուռքի վտանգված պայմաններում գործող՝ Ջեյթլյանը զատորոշում էր երկու հղացք՝ **քաղաքակրթություն** և **ազգային մշակույթ**, դրանք ասես տարանջատելով ու հակադրելով իրար: Ըստ նրա՝ քաղաքակրթությունը չպիտի դարձնել նպատակ, քանզի այն «կը ջնջէ բոլոր տարբերութիւնները եւ կը համահարթէ անհատական եւ ցեղային բոլոր յատկանիշները», «որովհետեւ անիկա կ՛այլասերէ, կ՛ապաքաղաքականացնէ եւ կ՛ապազգայնացնէ ժողովուրդը» (Յովհաննէսեան, 2025, 591–592): Դրա փոխարեն նա կարևորում էր ազգային մշակույթի զարգացումն ու խորացումը՝ իբրև ազգի կենսունակության, նրա դիմագծի, ինքնության պահպանման ու զարգացման աղբյուր և լծակ: Կարելի է հասկանալ Ջեյթլյանին՝ նկատի ունենալով այն ուծացնող միջավայրի վտանգը, ուր հայրենի եզերքից հեռու ապրում ու գործում էր գաղթաշխարհը:

Բայց կարծում ենք, որ ներկայումս՝ պետականության պայմաններում «ազգային» և «քաղաքակրթական» հասկացությունները միմյանց չպետք է հակադրել, այլ պետք է համադրել ու ներդաշնակել, այսինքն՝ օգտվելով համամարդկային արժեքներից, պահպանել ու զարգացնել սե-

փականը, ազգային նյութական ու հոգևոր մշակույթը և դրանով ներդրում ունենալ համաշխարհային քաղաքակրթության գանձարանում: Հարկավոր է յուրացնել համամարդկային արժեքները, գիտությունը, բարձր տեխնոլոգիաները, նորարարությունները և այլն՝ հանուն տվյալ երկրի, ժողովրդի, մարդկանց բարեկեցության, բարօրության ու առաջընթացի, բայց և միաժամանակ չկորցնելով ազգային դիմագիծն ու նկարագիրը: **Լինել ազգային-նշանակում է համադրել և ոչ թե՝ հակադրել այդ երկուսը**:

Ս. Ջեյթլյանի գաղափարական, քաղաքական, հրապարակախոսական գործունեության մեջ առաջնային պլանում է եղել Հայ Դատի արդարացի լուծման միջոցով անկախ պետականության վերականգնման խնդիրը: Ըստ նրա՝ պետությունն է պատմության անիվը առաջ մղող շարժիչ ուժը: «Ազգի մը **շարժիչ**, **առաջատար** ու **կեցուցիչ** ուժը պետական **անկախութիւնն** է, առնուազն անկախութեան ձգտումը» (Յովհաննէսեան, 2025, 644): «Առանց անկախ պետականության ցնորք է ֆիզիկական ապահովութիւնը, չարաշուք պատրանք է միայն» («Ազդակ», Պէյրութ, 1966, N 118):

Ս. Ջեյթլյանի գործերում պատմական փաստերով ընդգծված ու արժևորված է ՀՅԴ պետականակերտ գործունեությունը, մասնավորաբար Առաջին Հանրապետության շրջանում պետականության գաղափարի նյութականացման ուղղությամբ կուսակցության և նրա գործիչների թափած ջանքերը: Ջեյթլյանը Դաշնակցությանը կոչում էր հայրենակերտ ու պետականակերտ կուսակցություն (Յովհաննէսեան, 2025, 335):

Հիմք ունենալով Ջեյթլյանի դիտարկումները՝ մենագրության հեղինակ Կ. Հովհաննիսյանն արձանագրում է, որ գրեթե բոլոր ժամանակներում մեզանում չի եղել միահամուռ մոտեցում անկախության գաղափարի նկատմամբ: Այս հարցում հնուց ի վեր գոյություն են ունեցել երկու հակամարտ և իրարամերժ մոտեցումներ (Յովհաննէսեան, 2025, 628): Իր ժամանակին Ջեյթլյանը նկատել է, որ անկախության և ազգային ինքնիշխան պետականության գաղափարի քանդիչ ուղղությունը «օտար տիրապետության կողմնակիցներն են», ովքեր «զիրենք կը համարեն «խոհեմ» եւ «իրատես»» (Յովհաննէսեան, 2025, 629) նաև՝ («Յուսաբեր», 1960, N 49): Այդ «խոհեմներն» ու «իրատեսները» լուրջ պրոբլեմ են դարձել նաև Հայաստանի երրորդ Հանրապետության համար:

3. Հրապարակագրությունը՝ «Յուսաբեր» եւ «Ազդակ» օրաթերթերում (1955–1966 թթ.)

«Ժառանգաւորաց»-ի և «Նշան Փալանճեան»-ի շրջանավարտի ներուժն ու գիտելիքները առավել առարկայորեն ի հայտ եկան «Յուսաբեր»-ի, «Ազդակ»-ի, իսկ ավելի ուշ՝ «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ»-ի խմբագրականներում: Այդ խմբագրականներում, նաև հոդվածներում Ս. Զեյթլյանը խորիմաստ դատողություններ էր անում պատմության, ժամանակի ու տարածության, կյանքի ու մահվան մասին: 1962 թ. Ամանորի առիթով Զեյթլյանը գրում էր. «Ժողովուրդի մը համար ապրիլ կը նշանակէ պայքարիլ եւ ստեղծագործել յանուն վսեմ իտէալներու եւ ի խնդիր արժանավայել կեանքի մը ստեղծման: Ստեղծագործել կը նշանակէ պատմութիւն կերտել, յաղթահարել ժամանակ եւ տարածութիւն, կը նշանակէ մարդկայնանալ, մեծանա՛լ: Կը գոյատեւեն ու կը մեծնան այն ժողովուրդները, որոնք պատմութիւն կը կերտեն, կը խորտակեն իրենց իմացական աշխարհին բոլոր արգելքները: Կպազգայնանան եւ իրենց միտքին ու հոգիին դրոշմը կը դնեն ժամանակին վրայ» («Յուսաբեր», 1961, N 231):

Զեյթլյանի հրապարակախոսությունը խարսխված էր քրիստոնեական վարդապետության հոգևոր արժեքների ու կարգախոսների վրա: Հավատ, հույս և սեր կարգախոսներից նա առավել մեծ կարևորություն էր տալիս **Հավատին**, քանզի հավատ չունեցող մարդը չի կարող սիրել և հուսալ: Աշխարհական իմաստով՝ հայի հավատի հիմքը պիտի լինի նվիրումն ու սերը իր Հայրենիքի, հայ ժողովրդի, նրա տոկունության և վառ ապագայի հանդեպ: Հիսուսի պատգամներով՝ նա կարծում էր, որ ցիրուցան եղած ժողովրդին հարկավոր են բանիմաց մշակներ (հովիվներ), այսինքն՝ ղեկավարներ, ովքեր ժողովրդին պիտի առաջնորդեն լուսապայծառ ապագայի ու յաղթանակների, մեր արդար դատի իրագործման (Յովհաննէսեան, 2025, 218): Ս. Զեյթլյանը հայ ժողովրդի ու հայ հայրենիքի փրկությունը տեսնում էր բանիմաց, ճշմարիտ **Հովվի** և համախումբ **Հոտի**՝ իրարով պայմանավորված հավաքական միասնության մեջ:

Այս դիտարկումների կողքին խմբագրապետ ու հայոց պատմության ուսուցիչ Զեյթլյանն ընդգծում էր պատմության իմացության կարևորությունը՝ «Ժողովուրդի մը ամէնէն մեծ եւ ամէնէն անդաւաճան **առաջնորդը** (խորհրդատուն), իհարկէ, նախ եւ առաջ իր **պատմությունն է** (ընդգծումները հեղինակինն են – Ա. Հ.)» (Յովհաննէսեան, 2025, 219):

Նա հայ ժողովրդի ընտրյալ առաջնորդների թվին էր դասում Հայկ Նահապետին, Քաջն Վարդանին, Դավիթ Բեկին և «անման փաղանգը մեր ֆիտայիներուն» (Յովհաննէսեան, 2025, 220):

Ըստ Զեյլթլյանի՝ աստվածակերտ Մարդու գերտեսլականը (նպատակը) պետք է լինի ճշմարտությունը, արդարությունը և ազատությունը (Յովհաննէսեան, 2025, 222): Զեյթլյանի խմբագրականները լեցուն են աստվածաշնչյան մտքերով, դատողություններով ու պատգամներով, որոնք սակայն դեպի Երկնայինը միտված լինելու կողքին ուղղված են դեպի իրական ու առօրեական կյանքը՝ փորձելով կապ ստեղծել ներկայի ու ապագայի միջև: Նա դիմում ու ահազանգում էր ժողովրդին, որ Երկինքն ու Երկիրը կապող Ծիրանի (Ծիածանի) գոտին չպիտի վերանա մեր հոգեկան երկրակամարի վրայից, իսկ եթե այն անհետանա, ապա «այն ատեն Արարատը կը դադրի այլեւս հայութեան համար խորհուրդ մը ըլլալէ, եւ մենք խեղդամահ կ՛ըլլանք օտարության համայնակուլ «ջրհեղեղ»ներուն մէջ» (Յովհաննէսեան, 2025, 226) նաև («Ազդակ», 1966, N 258): Մի խոսքով՝ նա հայոց գոյապայքարին, որի խորհրդանիշը Արարատ լեռն է, հաղորդում էր աստվածաշնչյան իմաստ ու ոգեղեն բովանդակություն:

Ս. Զեյթլյանը քննության է ենթարկել նաև գիտության և կրոնի հարաբերակցության հարցը: Կարելի է նկատել, որ այս խնդրում Զեյթլյանը օգտվել է ՀՅԴ պատմագիր Մ. Վարանդյանի կրոնին ու գիտությանը վերաբերող աշխատության որոշ մտքերից (Վարանդեան, 1912): Մ. Վարանդյանը, հենվելով Չարլզ Դարվինի բնաշրջման տեսության վրա, ցույց էր տալիս գիտության և աստվածաբանության կամ կրոնի խորունկ տարբերությունը, որից հետևում է, որ դրանք գտնվում են տարբեր հարթությունների վրա: Կրոնական զգացումի սկզբնապատճառը երկյուղն է (վախը), մինչդեռ գիտությունը կոչված է իրեն բնորոշ փորձարարական, գիտամեթոդական գործիքակազմի կիրառումով հասկանալու ու ճանաչելու աշխարհը, նրանից բարիք կորզելու և այլն (Վարանդեան, 1912, Զ, 11, 23): Բայց այդ ամենով հանդերձ, աստվածավախ Ս. Զեյթլյանը, ընդգծում էր հավատի դերը, քանզի փիլիսոփաները, գիտնականները, առհասարակ՝ մարդիկ դիմում են կրոնի անհրաժեշտությանը, որովհետև մարդկային հասարակության կյանքն ու գոյությունը առանց հավատի կլինի թերի ու անբովանդակ (Յովհաննէսեան, 2025, 229):

Ս. Զեյթլյանի ձևակերպմամբ՝ գիտության և կրոնի հարաբերակցությունը հետևյալ տեսքն ունի. «գիտութիւնը նիւթական աշխարհի

գիտութիւնն է, իսկ կրօնը՝ ոգեկան աշխարհի գիտութիւնը» (Յովհաննէսեան, 2025, 230, նույնը՝ «Յուսաբեր», 21 ապրիլի 1962 թ., N 18, խմբագրական՝ «Յարութեան խորհուրդը»): Ջեյթլյանը նկատել է տալիս, որ այդ երկուսը որքան էլ տարբեր լինեն իրենց բնույթով, միանման են իրենց նպատակի մեջ՝ մեկը ճշմարտություն է որոնում փաստերի միջոցով, իսկ մյուսը՝ մարդկության փրկություն՝ ճշմարիտ հավատքի միջոցով (Յովհաննէսեան, 2025, 230): Այս դեպքում իբրև աստվածաբան՝ նա կրոնն ու գիտությունը չի հակադրել իրար, այլ դրանք ներկայացրել է որպես մեկ ամբողջություն՝ «Հ՛ոն, ուր անզոր կը դառնայ գիտութիւնը, անոր օգնութեան կը հասնի կրօնը» («Յուսաբեր», 21 ապրիլի 1962 թ., N 18, խմբագրական՝ «Յարութեան խորհուրդը»):

4. Ջեյթլյանի դիտարկումները Հայ Դատի վերաբերյալ

Հավատարմորեն շարունակելով խմբագրապետ Վ. Նավասարդյանի ավանդները՝ Ս. Ջեյթլյանը «Յուսաբեր»-ում շարունակել է նավասարդյանական պատգամը՝ լինել «անքթիթ պահակը Հայ Դատի» (Նաւասարդեան, 1925, 3): Ջեյթլյանի հրապարակախոսության տիրույթում Հայ Դատի հիմնախնդիրները հատկապես սուր կերպով բարձրացվեցին Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի շրջանում: Հասկանալիորեն, Ջեյթլյանի խոսքի գլխավոր հարվածն ուղղված էր թուրք իշխանությունների կատարած մեծագույն հանցանքն ուրանալու փորձերի դեմ: Ուստի Կ. Հովհաննիսյանը քաղվածքներ է բերում Ջեյթլյանի խմբագրած մամուլից: Նա դեռ 1960-ականներին է արձանագրել, որ թուրք պատմաբանները այն աստիճանի են խեղաթյուրել անցյալը, որ խեթական պետության և Ուրարտուի պատմությունը վերագրում են իրենց նախնիներին, իսկ «Արմենիա» անվանվող երկիրը հռչակում՝ թուրանական ժողովուրդների բնօրրան: Թուրք «պատմաբան» գրչակներից մեկն էլ, ի մի բերելով իր գործընկերների անհիմն հայտարարությունները, անպատկառ շնականությամբ եզրակացրել էր, որ գուցե հայ անունով ժողովուրդ, ուստի նաև Հայաստան անվանումով երկիր գոյություն չի ունեցել, իսկ Հայ Դատն էլ իբր՝ ռուսական ստեղծագործություն է: Ի պատասխան այդ բարբաջանքին Ս. Ջեյթլյանը իրեն բնորոշ սարկազմով հակադարձել է, թե միգուցե «1915-ին թուրքերը 1,5 մլն թուրք են ջարդել (Յովհաննէսեան, 2025, 518):

Հայոց ցեղասպանությունից ու հայրենազրկումից հետո թուրքերի հաջորդ քայլը եղել է Հայոց պատմության ու մշակույթի թրքա-

ցումը, այլ խոսքով՝ հայերի բոլոր նյութական, հոգևոր-մշակութային ու քաղաքակրթական արժեքների յուրացումը կամ առնվազն՝ նենգափոխումը: Բայց պատմական ճշմարտության լույսի ներքո Զեյթլյանը կարծում էր, որ թուրք կառավարողների կատարած հանցանքը «դամոկլեան սուրի մը պէս կախուած կը մնա Թուրքիոյ գլխուն եւ նա կը գիտակցի իր անզօրութիւնը պատմական ճշմարտութեան առջեւ» (Յովհաննէսեան, 2025, 519): Դրանով հանդերձ, Զեյթլյանն, իր հրապարակումներով, մեծ ճիգ ու ջանք է թափել, որ Հայ Դատը վերածվի առհասարակ **մարդկության** դատի բոլոր իմաստներով՝ քաղաքական, իրավական, գործնական, հունանիտար: Նա Հայ Դատը, դրա միջազգային իրավական ճանաչումը, դատապարտումը և փոխհատուցումը դիտում էր հայոց միասնական պետության ու հայ ժողովրդի գերագույն նպատակն ու իմաստը (Յովհաննէսեան, 2025, 528–529):

Հայ Դատի հետ կապված՝ Կ. Հովհաննիսյանը իր աշխատության մեջ առանձին բաժին է հատկացրել **Համայնավարություն – ՀՅԴ** հարաբերությունների քննությանը: Հայաստան-Սփյուռք կապերի սերտացման առումով՝ Մերձավոր Արևելքի հայ կյանքի մեջ հետաքրքրական դրվագ էր 1963 թ. աշնանը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն առաջինի (1908–1994 թթ.) այցելությունը, որի վերաբերյալ առատ նյութեր կան «Յուսաբեր»-ի և «Ազդակ»-ի համարներում: Հայտնի է, որ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի շրջափուլում խորհրդային բարձր ղեկավարությունը փոքր-ինչ մեղմացրել էր իր բացասական վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հիշատակման խնդրի հանդեպ: Այդ մասին իր ելույթներում նշել է նաև Վեհափառը: Մասնավորապես նա դրականորեն է արտահայտվել Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարներից Նագուշ Հարությունյանի Յա. Զարոբյանի և Ա. Քոչինյանի՝ Դաշնակցության հանդեպ բավականին լոյալ դիրքորոշման մասին: Գրքում արձանագրված է, որ այդ առումով Հայաստանի ղեկավարու- թյան և ժողովրդի առնվազն 75 % (3/4-ը) դրական իմաստով փոխել էր իր մտայնությունը՝ ի նպաստ Դաշնակցության անցյալի գործունեության և պահանջատիրության: Կաթողիկոսն անգամ առաջարկություն էր արել, որպեսզի դաշնակցական ղեկավար դեմքերը գան Հայաստան, և որ ինքը պատրաստ է ՀՅԴ ներկայացուցիչների համար մուտքի «վիզա» ձեռք բերել[2]: Գրքի հեղինակի կարծիքով՝ մեզ-

[2] Այս հետաքրքրական նյութերը մենագրության հեղինակ Կ. Հովհաննիսյանը բարեխղճորեն քաղել է ՀՅԴ Լիբանանի արխիվի ֆոնդերից (Յովհաննէսեան, 2025, 248–257):

անում Դաշնակցության դեմ պայքարը հրահրվում էր օտար պետություններ ու նրանց գործակալների կողմից (Յովհաննէսեան, 2025, 276):

Կ. Հովհաննիսյանը քաղվածքներ է բերում բոլշևիզմի և Դաշնակցության միջև առկա տարբերությունների մասին Ձեյթլյանի մտորումներից, մտքերից ու դատողություններից: Օրինակ՝ «Բոլշեւիզմը կ՛ուրանայ հայրենիքի եւ հայրենիքներու գաղափարը, որովհետեւ կը ձգտի ստեղծել համապարփակ աշխարհ մը, ուր հայրենիք չկայ, մինչդեռ Դաշնակցութիւնը կը հաւատայ հայրենիքի գաղափարին, որ էապէս կապուած է ազգի գաղափարին»: Նույն կերպ՝ «Բոլշեւիզմը չ՛ընդունիր ազգի գաղափարը եւ անոր ստորոգելիները–ազգային մշակոյթ, ազգային գրականութիւն, ազգային արուեստ, կրօն եւ այլն – եւ կը ձգտի միաձուլել բոլոր ազգերը՝ ստեղծելու համար ընկերվար անազգ ընկերութիւն մը» (Յովհաննէսեան, 2025, 278): Դրան հակադիր՝ «Դաշնակցութիւնը կը հաւատայ ազգի գաղափարին, իբրեւ մնայուն արժէք» (Յովհաննէսեան, 2025, 279):

Գրքում զեյթլյանական ոգով ու ոճով ներկայացված է բոլշևիզմի ողջ էությունը՝ փոքր երկրների, ժողովուրդների մարդկանց ազատության և անկախության գաղափարներին բռնանալու և նրանց խեղդելու ամեն մի ձգտումը: Նույնպիսի մոտեցում է դրսևորվել հայ եկեղեցու հանդեպ՝ «հաւանաբար չկայ ժամանակաշրջան մը, երբ այս կրօնական կառոյցը այնքան մահասարսուռ օրեր ապրած ըլլայ, որքան բոլշեւիկեան շրջանը, յատկապէս 1921–1970 յիսնամեակին» (Յովհաննէսեան, 2025, 279–280):

Գրքում ներկայացված է, որ բոլշևիզմը հատկապես պայքարել է հայոց անկախության խորհրդանիշներ «Մայիս 28»–ի ու «Եռագույն»–ի և դրանց նյութականացման ուղղությամբ ՀՅԴ թափած ջանքերի դեմ: Փաստվում է, որ գաղթաշխարհում, համենայն դեպս Եգիպտոսում և Լիբանանում, բոլշևիկյան իշխանության պետական մարմինները խափանել են տվել Հայաստանի անկախության տարեդարձի տոնակատարության ձեռնարկները: «Մայիս 28» և «Եռագոյն» խորհրդանիշները, որով հոգեպես ապրում էր գաղթաշխարհը ու հատկապես ՀՅԴ–ն, անբաժանելի հասկացություններ էին. «Յստակ է,– գրում է Կ. Հովհաննիսյանը,– որ Մայիս 28–ի դէմ պայքարելով, Բոլշևիզմը եւ անոր հետեւորդները կը պայքարին Դաշնակցութեան դէմ» (Յովհաննէսեան, 2025, 282):

Ձեյթլյանի բնորոշմամբ՝ բոլշևիզմի էությունն ու հավատամքը հետևյալն էր. «Խրուշչովները միայն մէ՛կ ազգ կը ճանչնան–**Սովետա**–

կան ազգը: Միայն մէ՛կ մշակոյթ կ՛ընդունին– **սոցիալիստական** մշակոյթը: Միայն մէ՛կ պետութիւն գոյութեան իրաւունք ունի անոնց համար,–**համայնավար** պետութիւնը: Միայն մէ՛կ լեզու–**ռուսերէ՛նը**: Եւ միայն մէ՛կ «արդար» դատ կը հետապնդեն, – **կոմունիզմը**» (ընդգծումները գրքինն են – Ա. Հ.) («Յուսաբեր», 1961, N 44): Իսկ Խորհրդային Հայաստանի պետականության հարցում «Յուսաբեր»-ի խմբագրապետը գրում էր. «Մենք, ի հարկէ, կը ճանչնանք հայ պետութիւնը **տէ ֆաքթօ**, այսինքն՝ իբրև իրականութիւն մը, որ կայ, գոյութիւն ունի: Բայց չենք ճանչնար իր վարչաձեւը, զայն նկատելով անհամապատասխան՝ հայ ժողովուրդի կամքին ու բաղձանքներուն» («Յուսաբեր», 1960, 288):

Հայաստանի խորհրդայնացման 40-ամյակի առնչությամբ Ս. Զեյթլյանը ցավով արձանագրում էր, որ «Խորհրդային Միութեան մէջ Հայաստան կորսնցուց իր ազատութիւնը, անկախո-ւթիւնը:...Մենք իրաւունք ունէինք մեր տան մէջ **տէր** ըլլալու, հիմա պարտաւոր ենք մեր տան մէջ ծառայ ըլլալու» («Յուսաբեր», 1960, N 207; Յովհաննէսեան, 2025, 339):

Ս. Զեյթլյանը և կարելի է ասել, ըստ էության, նաև հայ գաղթաշխարհը ծանոթ են եղել ռուսական բոլշևիզմի էությանն ու գործելակերպին: Այս համատեքստում Զեյթլյանը անդրադարձել է նաև համայնավար-բոլշևիկ պատմագիրների պատմաշինարարությանը: Այդ տեսակետից անդրադարձ կա պատմաբան Գ. Գալոյանի մարքս-լենինյան ըմբռնումներով գրված աշխատություններին ու հրապարակումներին: Հիշատակված է նաև Հ. Թուրշյանի հայտնի «Սարդարապատի հերոսամարտը» գիրքը, որում նենգափախված է Մայիսյան հերոսամարտերի իրական պատմությունը (Յովհաննէսեան, 2025, 287-289): Հայտնի է, որ այդ գրքում միակողմանիորեն անտեսված է Հայկական բանակային կորպուսի խաղացած դերը հերոսամարտում և խորհրդային պատմագրությանը բնորոշ զուտ գաղափարական-դասակարգային իմաստով՝ այդ հաղթանակը վերագրված է հասարակ ժողովրդին (Թուրշյան, 1965):

Զեյթլյանը՝ իբրև պատմաբան, հատկապես անդրադարձել է Հայ Դատի հանդեպ բոլշևիզմի վերաբերմունքին՝ այն դիտարկելով որպես Թուրքիայի հետ հարաբերությունների ածանցյալ՝ «**Երբ այդ յարաբերութիւնները լաւ չեն՝ ռուսերը պաշտպան են Հայ Դատի, իսկ երբ լաւ են՝ անոնք կը ծախեն Հայ Դատը: Այսինքն, Հայ Դատը խաղա-**

քարտ էր ռուսերու ձեռքին (ընդգծումը մերն է – Ա.Հ.)» (Յովհաննէսեան, 2025, 297–298):

Ջեյթլյանի ձևակերպմամբ՝ Հայ Դատը ունի գլխավոր երեք պահանջ (երես). «1.**Հողահավաք**–Ամբողջական Հայաստանի ստեղծում, այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի ազատագրում եւ ներքին գաւառներու վերակցում Հայաստանի: 2. **Ազգահաւաք**–Ամբողջական հայութեան համախմբումը Միացեալ Հայաստանի մէջ: 3. **Ազատ ինքնորոշում**–Հայութեան ազատ կամքով՝ վերականգնում Հայոց միացեալ անկախ պետականութեան՝ ազգերու ազատ ինքնորոշման հիման վրայ» («Ազդակ», 1966, N 108):

Տեղին է նկատել Ջեյթլյանը, որ հետպատերազմյան շրջանում Կրեմլի համար Հայ Դատը եղել է ընդամենը քաղաքական խաղաքարտ: Այդ գաղափարին համահունչ էին ԽՍՀՄ ա. գ. ժողկոմ Վ. Մոլոտովի 1953 թ. մարտի 30–ի, մեկ ուրիշ տեղ մայիսի 31–ի (պիտի լինի մայիսի 30–ի – Ա. Հ.) պաշտոնական հայտարարությունները՝ «Խ. Միութիւնը հողային որեւէ պահանջ չունի Թուքիայէն» («Յուսաբեր», 1960, N 255, «Ազդակ», 1965, N 143, տե՛ս նաև Պոդստամի կոնֆերանսը, 1989, 591) Այս նույն միտքը վերահաստատել էր Ն. Խրուշչովը 1963 թ. հունիսին Մոսկվայում՝ թուրքական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ (Յովհաննէսեան, 2025, 300, 362, 546–547): Գրքում լրացուցիչ փաստեր են արձանագրված 1965 թ. մայիսի 18–ին, այսինքն՝ ցեղասպանության 50–ամյա տարելիցի շրջանում, ա. գ. մինիստր Ա. Գրոմիկոյի խոսքերը, որ ԽՍՀՄ–ը որևէ տարածքային պահանջ չունի Թուրքիայից և որ հարկ է հետևել Լենին–Աթաթուրքի օրինակին (Յովհաննէսեան, 2025, 549): Ջավեշտալին այն է, որ խորհրդային կողմը տարածքային պահանջ չունենալու մասին իր այդ և հետագա նույնաբովանդակ հայտարարություններն արել էր Հայկ ՍՍՌ, իսկ, Բաթումի մարզի առնչությամբ, նաև Վրաց ՍՍՌ կառավարությունների անունից: Մինչդեռ՝Ջեյթլյանը Հայ Դատը դիտում էր որպես Հայաստանի ու հայ ժողովրդի գոյության գերակա նպատակ (Յովհաննէսեան, 2025, 528 և 535): Ս. Ջեյթլյանը Հայ Դատի հաղթանակի մեջ էր տեսնում հայոց անկախ պետականության վերականգնումը, ուստի և՝ հայ ժողովրդի փրկությունը: (Յովհաննէսեան, 2025, 628):

Ս. Ջեյթլյանի դիտարկմամբ «Հայ Դատը ունի երկու թշնամի՝ թուրք եւ ռուս, որոնք միասնաբար կը դաւեն հայ ժողովրդի դեմ» (Յովհաննէսեան, 2025, 550 նաև՝ «Ազդակ», 1965, N 144): Ջեյթլյանի մեկ այլ եզրահանգմամբ՝ Լենինն ու Աթաթուրքը, կեղծ բարեկամություն խաղալով, եղբայ-

բացնելով **սոցիալիզմն** ու **թուրանիզմը**՝ «մահաբեր տապանաքար զետեղած են Հայ Դատի վրայ» («Ազդակ», 1966, N 16; Յովհաննէսեան, 2025, 553):

5. Զեյթլյանի դիտարկումները Անթիլիաս-Էջմիածին տագնապի շուրջ

Նախ արձանագրենք, որ Մերձավոր Արևելքի հայ գաղթաշխարհի շրջանակներում եղել է միջկուսակցական ճակատ՝ մի կողմից՝ ՌԱԿ-ը, ՍԴՀԿ-ն, ՀԲԸՄ-ը, հայ համայնավարները (կոմունիստներ) և նույնիսկ չեզոք կոչվածներից ոմանք միավորված են եղել **Համախմբում** կոչված ճակատում, իսկ մյուսը, որը գլխավորում էր ՀՅԴ-ն կոչվում էր **Ազգային** ճակատ (Յովհաննէսեան, 2025, 408): Այս երկու ճակատ-թևերի միջև բանախոսական առճակատում էր ընթանում ոչ միայն խորհրդային վարչակարգի, ի մասնավորի, Խորհրդային Հայաստանի հանդեպ քաղաքական կողմնորոշման հարցերում, այլև այն երբեմն ստանում էր նաև «Էջմիածին-Անթիլիաս» հակամարտության տեսք:

Համախմբում ճակատը ներկայանում էր ընդգծված հայաստանասիրության ցուցադրման դիրքերից ու ավելի քան լոյալ էր խորհրդային վարչակարգին: Դա ի հայտ էր գալիս հատկապես թեմական ընտրությունների կապակցությամբ և արտահայտվում էր սուր մրցապայքարով՝ մամուլի հրապարակումների հոդված-խմբագրականներում: Օրինակ՝ Եգիպտոսում «Յուսաբեր»-ի դեմ ներկայանում էր Կահիրեի ՌԱԿ-ի «Արեւ» պաշտոնաթերթը: Ընդ որում՝ ռամկավարները և մյուս համախմբականները ներկայանում էին իբրև ընդգծված Էջմիածնասերներ, իսկ դաշնակցականները՝ Անթիլիասականներ: Հակամարտությունն այնքան թեժ բնույթ էր ստացել, որ տագնապին մասնակից է եղել Բոստոնի ռամկավարների օրգան «Պայքար»-ը:

«Յուսաբեր»-ի խմբագրապետ Զեյթլյանը պարզաբանում էր, որ «իրենք կը պայքարեն ոչ թե Էջմիածինի Եկեղեցիին դեմ, այլ Հայաստանում տիրող վարչաձևին դէմ» (Յովհաննէսեան, 2025, 428): Մեկ այլ տեղ Զեյթլյանը այդ արհեստական տարակարծությանը տվել է հետևյալ բանաձևումը՝ «Անթիլիաս՝ Էջմիածինի համար, երկուքը միասին հայ ժողովրդին համար»: Զեյթլյանի դիտարկմամբ՝ ռամկավարների էջմիածնասիրության հիմքում եղել է քաղաքական ենթատեքստ, այսինքն՝ խորհրդասիրություն: Զեյթլյանը տվել է Էջմիածնի և Անթիլիասի միջև տագնապի հետևյալ խորքային պարզաբանումը՝ այն է՝ Հայ եկե-

ղեցին վարչականորեն **ապակենտրոն** է, մինչդեռ բոլշևիզմը, իր բնույթին հավատարիմ, միակուսակցական ամբողջատիրական վարչակարգի նման ձգտում էր, որպեսզի Հայաստանյայց եկեղեցում էլ հաստատվի կղերապետական մենատիրություն՝ «իր քաղաքական-գաղափարական նպատակները իրագործելու համար» («Յուսաբեր», 1962, N 210):

Անթիլիասի Աթոռի դեմ ոտնձգություններ են արվել ո՛չ միայն գաղթաշխարհի շրջանակների կողմից, այլև Հայաստանից: Այսպես, գրքում բերված է ուշագրավ մի փաստ այն մասին, որ 1945 թ. Երևանում գումարված Ազգային եկեղեցիական ժողովում ճանաչված հայագետ Ստ. Մալխասյանցը, բոլշևիկների քիմքին հավատարիմ, առաջարկել է «ջնջել Մեծի Տանն Կիլիկիոյ Անթիլիասի Աթոռը, իբրև մեկ մարմին, մեկ գլուխ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին կապելու» (Յովհաննէսեան, 2025, 445)[3]: Եվ այս պարագային շատ գնահատելի է եղել Գևորգ Զ (Չորեքչյան) կաթողիկոսի դրսևորած կեցվածքը, երբ նույն ժողովում մեծահոգաբար դեմ է արտահայտվել նման առաջարկին՝ նշելով. «Էջմիածինը պետք է ապրի Անթիլիասի համար եւ Անթիլիասը ապրի Էջմիածնի համար: Երկուքն ալ հայութեան համար անբաժան» (Յովհաննէսեան, 2025, 445): Իրականում Զեյթլյանը կեղծ ու շինծու է համարել Էջմիածինն ու Անթիլիասը իրար հակադրելը՝ «Էջմիածնասիրություն»-ը, ըստ Զեյթլյանի՝ դա ընդամենը բոլշևիկյան մոտեցում էր, որի նպատակը Հայաստանյայց եկեղեցու հիմքերի խարխլելն էր, ինչպես որ նախորդ տասնամյակների ընթացքում տեղի էր ունեցել խորհրդային վարչակարգում: Քանզի Զեյթլյանի իրավացի իր գնահատականում՝ Խորհրդային Հայաստանում ըստ մեզ հայտնի դեկրետի՝ Եկեղեցին ոչ թե անջատված էր պետությունից, այլ պարզապես ոչնչացված էր («Յուսաբեր», 1962, N 221)[4]:

Կ. Հովհաննիսյանը տվյալներ է բերում, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը, այսինքն՝ մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, Էջմիածնի Մայր աթոռն ունեցել է 100 հազ. դեսյատին հողատարածք, 1327 եկեղեցի, ավելի քան 80 վանք, 7 եպիսկոպոսներ, 34 վարդապետներ և 1547 քահանաներ (Յովհաննէսեան, 2025, 428): Մինչդեռ Հայաստանում

[3] Այս առնչությամբ տեղին է հիշեցնել Հայկոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար Գր. Հարությունյանի (Արուտինով) 1938 թ. օգոստոսի 4-ի գաղտնի գրությունը Մոսկվա՝ Ստալինին, առաջարկելով «փակել Էջմիածնի վանքը և լուծարել կաթողիկոսությունը» (Հակոբյան, 2017, 81):

բոլշևիկյան բռնավարչակարգի հաստատումից հետո դրանք, ըստ էության, բռնագրավվեցին, եկեղեցիները վերածվեցին պահեստների կամ առհասարակ ավերվեցին, իսկ հոգևորականության զգալի մասը ենթարկվեց քաղաքական բռնաճնշումների, այդ թվում Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը: Ի մի բերելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ անքննելի է Հայաստանյաց եկեղեցու երկու նվիրապետական աթոռների՝ Սբ. Էջմիածնի և Սբ.Անթիլիասի կոչումը, թեկուզ և վարչականորեն ապակենտրոն, սակայն հոգևոր հավատքի միասնությամբ նրանք անբաժան են՝ ծառայելու համայն հայությանը:

Հաստատումներ ու եզրակացություններ

Պատմաբան Կ. Հովհաննիսյանի՝ Ս. Զեյթլյանի կյանքին ու բեղմնավոր գործունեությանը նվիրված աշխատությունն ավարտվում է վերջաբանով, որում ամփոփված են ազգային գործչի կյանքի ու մանկավարժական-խմբագրական գործունեության առաջին շրջանի արդյունքները՝ ընդգծելու համար մանկավարժ-ուսուցչապետի, մտավորական-կազմակերպչի, խմբագրի, կուսակցական ու քաղաքական գործչի անմնացորդ նվիրումը իր գործին: Իսկ երկրորդ գիրքը, որն ըստ երևույթին առավել հագեցած կլինի՝ ընդգրկելու է Ս. Զեյթլյանի կյանքի ու գործեںեության երկրորդ շրջանը (1966-1985 թթ.), այսինքն՝ մինչև կյանքի ավարտը:

Կ. Հովհաննիսյանը գործել ու հասունացել է Զեյթլյանի ուսուցչապետությամբ, ինչը, բնականաբար, առավելություն է նմանատիպ աշխատություն գրելու, հատկապես իր ուսուցչի կերպարը, մտածումները, խառնվածքը բացահայտելու տեսակետից: Նա ընդգծում է Զեյթլյանի սկզբունքայնությունը՝ միայն ճշմարտությանը հետամուտ լինելը: «**Զէյթլեան երբեք չգործեց հաճելի ըլլալու տրամաբանութեամբ, որուն ախոյեանները այսօր կը վխտան մեր իրականութեան մէջ: Դոյզն իսկ չզիջեցաւ այս սկզբունքէն: Երբեք չգործեց իր բարոյական ըմբռնումներուն հակառակ: Գիտեր «ոչ» ըսել եւ հաստատ մնալ իր խօսքին վրայ: Գաղափարապաշտ էր, եւ մոլեռանդ: Ամրօրէն կառչած մնաց ճշմարտութեան փնտռտուքին մէջ: Երբեք չլռեց ճշմարտութիւններու դիմաց. փորձ ալ չըրաւ ծածկելու զանոնք: Քարոզեց եւ հետապնդեց ճշմարտութիւնը: Վազեց ճշմարտութեան ետեւէն: Գրեց ու խօսեցաւ այն՝ ինչ որ իր անկեղծութեան առաքելութիւնը բացայայտեց: Ի ծնէ յախուռն էր ան արդէն իր արտայայ-**

տութիւններուն մէջ: Ունէր արժանապատուութեան եւ պատասխանատուութեան զգացում: իր մտածումը կ'ըսէր առանց բառերը ծամծմելու եւ դարձդարձիկ մեկնութիւններու: Պարկեշտ, ճշմարտախօս եւ ուղղամիտ էր»,– եզրակացնում է մենագրության հեղինակը (Յովհաննէսեան, 2025, 733):

Գրքի հեղինակի ասվածին կարելի է հավելել նաև այն, որ Ս. Զեյթլյանը Ազգի ու Հայրենիքի շահերի ու արդար իրավունքների պաշտպանությանը նվիրված անհատականություն էր: Ուստի Կ. Հովհաննիսյանի սույն մենագրությունը կարելի է դիտել որպես անձեռակերտ հուշարձան՝ Սարգիս Զեյթլյանին:

Մենագրության ամենավերջում՝ Դ բաժնում, զետեղված է «Հավելված», որում տեղ են գտել Ս. Զեյթլյանի առավել ուշագրավ փաստաթղթերը, նամակներ՝ ուղղված իր ուսուցչապետ Ս. Վրացյանին, նաև Ն. Տերտերյանին, Գ. Գյուլպենկյան հիմնարկությանը, Արք. Ուրֆալյանին և այլն (Յովհաննէսեան, 2025, 773–790):

Այսպիսով՝ ի մի բերելով Կ. Հովհաննիսյանի կողմից ընթերցողի դատին հանձնված սույն աշխատությունը՝ կարելի է արձանագրել, որ ընթերցողի սեղանին դրված մենագրությունը և՛ նյութերի հավաքման և՛ տողատակի ապարատի, և՛ գիտականորեն համակարգված շարադրանքի, և՛ հետազոտության հերոս Ս. Զեյթլյանի հետ հեղինակի ունեցած կենդանի կապը հրապարակ բերելու առումներով արժանի է բարձր գնահատականի: Այդ ամենով հանդերձ՝ թող ընթերցողի մոտ տպավորություն չառաջանա, թե գրախոսվող մենագրությունը նվիրված է միայն Ս. Զեյթլյանի կյանքի ու գործունեության պատմությանը: Իրականում՝ պատմականության սկզբունքի պահպանմամբ այն ընդգրկում է Ս. Զեյթլյանի կյանքի ու գործունեության բարդ ժամանակն ու աշխարհագրությունը՝ Մուսալեռից դեպի Լիբանան, Երուսաղեմ ու Եգիպտոս: Իսկ ուսումնակրթական, լրագրողահրապարակախոսական առումներով, ըստ էության, ներառում է ողջ հայ իրականությունը ու նաև՝ Հոգևոր Հայրենիքը: Սույն մենագրության մեջ զետեղված Զեյթլյանի հրապարակումներից բերված քաղվածքները հայոց իմաստավորված, մեկնաբանված ու գնահատված պատմության տարեգրությունն են:

Դրանք վկայում են, որ նշանակալի են Ս. Զեյթլյանի ծառայությունները նոր ժամանակներում հայ քաղաքական մտքի և պետականության գաղափարի սերմանման ու ամրակայման գործում: Նա դարձավ ոչ միայն Հայ Դատի ռազմավարության մշակման ուղղությամբ գործնա-

կան աշխատանքներ տանելու, այլև նոր ժամանակների եւ իրողությունների հոլովույթում «քաղաքական անոթի»՝ անկախ պետականության գաղափարի ամրակայման ու նյութականացման գործի առաջամարտիկը ու դրանով իր նպաստը բերեց մեր ժամանակներում հայոց անկախ պետականության վերականգնման գործին:

Ս. Ջեյթլյանի կուսակցական, լրագրողական, հրապարակախոսական գործունեության գնահատելի կողմերից էր նրա անհաշտ կեցվածքը խորհրդային-բոլշևիկյան ամբողջատիրական վարչակարգի, դրան ուղեկից կեղծիքների ու անարդարությունների, մասնավորապես Հայկական հարցում ռուս-թուրքական գործակցության դրսևորումների հանդեպ, որոնց արդյունքում հայկական պատմական հողերն աճուրդի հանվեցին և իբրև մանրադրամ բաժանվեցին միմյանց միջև:

Ս. Ջեյթլյանի կյանքն ընդհատվեց ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում՝ նենգ ու դավադիր ահաբեկչությամբ: Ազգի թշնամիները՝ մնալով ստվերում, հարմար պահ էին ընտրել ճշմարիտ ազգայինի մարմնավորումը դարձած վառ անհատականությանը ասպարեզից հեռացնելու համար: Սակայն որքան էլ մեծ էր կորուստը, հետագա տասնամյակները ցույց տվեցին, որ Ս. Ջեյթլյանի գաղափարները չեն կորցրել իրենց նշանակությունը: Ավելին՝ նրանք առաջ են անցել իրենց ժամանակից:

Ուստի ճիշտ ժամանակին ընթերցողի դատին հանձնված Կ. Հովհաննիսյանի մեծարժեք աշխատությունը սկսում է հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման, կրթական ու կազմակերպական ասպարեզներում հսկայական ավանդ ներդրած ականավոր գործչի՝ Սարգիս Ջեյթլյանի ուսանելի պատգամների վերընթերցումն ու վերաթարմացումը, որն իր ավարտին կհասնի գրախոսվող աշխատության երկրորդ հատորի հրատարակությամբ:

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն պատմաշրջանների հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ քաղաքական կուսակցությունների, Հայաստանի առաջին Հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի և այլ հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի և ավելի քան 160 գիտական հոդվածի:

Գրականության ցանկ

1. «Ազդակ», Պէյրութ: 23 յուլիսի 1966 թ., N 118 (խմբ. «Անկախութեան հարցին շուրջ»):
2. «Ազդակ», Պէյրութ: 22 յուլիսի 1966 թ., N 117 (խմբ. «Անկախութիւն»):
3. «Ազդակ», Պէյրութ: 5 յունվարի 1966 թ., N 258 («Ծանի՛ր գքեզ» խմբ.):
4. «Ազդակ», Պէյրութ: 25 նոյեմբերի 1965 թ., N 224 (խմբ. «Տարօրինակ լռութիւնը»):
5. «Ազդակ», Պէյրութ. 21 օգոստոսի 1965 թ. N 143, նույնի՝ 16 յուլիսի 1966 թ., թիւ 112 (խմբ. «Հայ Դատը միջո՞ց է, թէ՞ նպատակ»):
6. «Ազդակ, Պէյրութ.1965 թ., 23 օգոստոսի, N 144 (տե՛ս խմբ.՝ «Թիւրք-խորհրդային բարեկամութեան սահմանները»:
7. «Ազդակ», Պէյրութ. 28 հունիսի 1966 թ., N 96 (խմբ.):
8. «Ազդար», Պէյրութ. 23 մարտի 1966 թ., N 16 (տե՛ս խմբ. «Նոր տապանաքար»):
9. «Ազդակ», Պէյրութ.12 յուլիսի 1966 թ., N 108, (խմբ.):
10. «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (փաստաթղթերի ժողո-վածու), (1989). Երևան: «Հայաստան» հրատ., 591:
11. **Ջէյթլեան, Ս**. (1993). Գաղափարի մարտիկը («Դրօշակ»-ի մեջ հրատարակված խմբագրականներ և հոդվածներ), Պէյրութ: 774:
12. **Ջեյթլեան, Ս**. (1995). Հայ ազգային քաղաքականութեան գաղափարապանութիւնը, հ. Ա, Երեւան-Լոս-Անճելըս, 866:
13. **Թուրշյան, Հ**. (1965). Սարդարապատի հերոսամարտը, Երևան: «Հայաստան» հրատ., 270:
14. **Լեո.** (2014). Հայկական հարցի վավերագրերը, Երևան. ԵՊՀ հրատ., 273:
15. **Լեո**. (1925. Անցյալից, հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս: «Խորհրդային Կովկաս» հրատ., 482:
16. **Խորենացի, Մ**. (1961). Հայոց պատմություն, թարգմ., ներածություն և ծանոթագրություն Ստ. Մալխասյանցի, Երևան: «Հայպետհրատ», 448:
17. **Հակոբյան, Ա**. (2017). 1937 թվականը Հայաստանում, Երևան: Զանգակ հրատ. (96).
18. «Սարգիս Ջէլթլեան դատը», (1994). Լոս Անճելըս: Կալեան հաստատութեան հրատ.:
19. **Յովաննէսեան, Կ**. (2025). Ամենաղեկավարը՝ Սարգիս Ջէլթլեն, Ա. հատոր, Անթեղուած գործեր եւ գրութիւններ: Պէյրութ. Համազգային «Վահէ Սեթեան» հրատ. 816 էջ:
20. «Յուսաբեր», Գահիրէ. 30 յունվար 1960 թ, N 255,
21. «Յուսաբեր», Գահիրէ. 28 մայիսի 1960 թ., N 49. (խմբ. Ս. Ջ. «Անկախութիւն»):
22. «Յուսաբեր», Գահիրէ. 9 մարտի 1960 թ., N 288:
23. «Յուսաբեր», Գահիրէ. 1 սեպտեմբերի 1960 թ., N 137 (խմբ.):
24. «Յուսաբեր», Գահիրէ. 1 դեկտեմբերի 1960 թ., N 207:

25. «Յուսաբեր», Գահիրէ. 25 մայիսի 1961 թ., N 44 (խմբ.):
26. «Յուսաբեր», Գահիրէ. 23 մարտի 1961 թ., N 300:
27. Յուսաբեր», Գահիրէ. 30 դեետեմբերի 1961 թ., N 231. (Խմբ. «Խորհրդածութիւններ
28. Նոր տարուան առիթով»):
29. «Յուսաբեր», Գահիրէ. 7 դեկտեմբերի 1962 թ. N 210:
30. **Նազարեանց, Ստ**. (1913). Երկեր, հատ. Ա, Թիֆլիս: տպ. Աղայանի, 428:
31. **Նաւասարդեան, Վ**. (1925). Դաշնակցութեան քաղաքական ուղին, Գահիրէ:
32. **Վարանդեան, Մ**. (1912). Կրօն եւ գիտութիւն, Կ. Պոլիս, «Ազատամարտ» տպ., 168:
33. **Վրացեան, Ս**. (2007). Կեանքի ուղիներով (դէպքեր, դէմքեր, ապրումներ), հատ. Ջ, Պէյրութ: Համազգայինի «Վահէ Սէթեան» տպ., 343:
34. «Правда», Москва, 4 декабря 1920 г.
35. https://www.aztadaly.com/archives/388406 (դիտվել է՝ 21.05.25 թ.).

Bibliography (Latin Script)

1. «Azdak», Peyrut’: 23 yulisi 1966 t’., t’iw 118 (khmb. «Ankakhut’ean harts’in shurj») (**in Armenian**).
2. «Azdak», Peyrut’: 22 yulisi 1966 t’., N 117 (khmb. «Ankakhut’iwn») (**in Armenian**)
3. «Azdak», Peyrut’: 5 yunvari 1966 t’., N 258 («Tsani'r zk’ez» khmb.) (**in Armenian**)
4. «Azdak», Peyrut’: 25 noyemberi 1965 t’., N 224 (khmb. «Tarorinak lrrut’iwny»)(**in Armenian**)
5. «Azdak», Peyrut’. 21 ogostosi 1965 t’. N 143, nuyni, 16 yulisi 1966 t’., N 112 (khmb. «Hay daty mijo?ts’ e, t’e? npatak»)(**in Armenian**)
6. «Azdak, Peyrut’.1965 t’., 23 ogostosi, N 144 (te′s khmb., «T’iwrk’–khorhrdayin barekamut’ean sahmannery»:(**in Armenian**)
7. «Azdak», Peyrut’. 28 hunisi 1966 t’., N 96 (khmb.) (**in Armenian**)
8. «Azdar», Peyrut’. 23 marti 1966 t’., N 16 (te′s khmb. «Nor tapanak’ar»)(**in Armenian**)
9. «Azdak», Peyrut’.12 yulisi 1966 t’., N 108, (khmb.) (**in Armenian**)
10. «Dashnakits’ yerek’ terut’yunneri, KHSHM–i, AMN–i yev Mets britaniayi ghekavarneri Berrlini (Potsdami) konferansy (p’astat’ght’eri zhoghovatsu), (1989). Yerevan: «Hayastan» hrat., 591 (**in Armenian**)
11. **Zeyt’lean, S**. (1993). Gaghap’ari martiky («Droshak»–i mej hratarakvats khmbagrakanner yev hodvatsner), Peyrut’: 774 ej (**in Armenian**)
12. **Zeyt’lean, S**. (1995). Hay azgayin k’aghak’akanut’ean gaghap’arapanut’iwny, h. A, Yerevan–Los–Anchelys, 866 ej
13. **T’urshyan, H**. (1965). Sardarapati herosamarty, Yerevan: «Hayastan» hrat., 270 ej (**in Armenian**)

14. **Leo**. (2014). Haykakan harts'i vaveragrery, Yerevan. YePH hrat., 273 ej (**in Armenian**)
15. **Leo**. (1925. Ants'yalits', husher, t'ght'er, datumner, T'iflis: «Khorhrdayin Kovkas» hrat., 482 ej (**in Armenian**)
16. **Khorenats'i, M**. (1961). Hayots' patmut'yun, t'argm., neratsut'yun yev tsanot'agrut'yun St. Malkhasyants'i, Yerevan: «Haypethrat», 448 ej (**in Armenian**)
17. **Hakobyan, A**. (2017). 1937 t'vakany Hayastanum, Yerevan: Zangak hrat. 96 ej (**in Armenian**)
18. «Sargis Zelt'lean daty», (1994). Los Anchelys: Kalean hastatut'ean hrat. (**in Armenian**)
19. **Yovannesean, K**. (2025). Amenaghekavary, Sargis Zelt'len, A. hator, Ant'eghuats gortser yev grut'iwner: Peyrut'. Hamazgayin «Vahe Set'ean» hrat. 816 ej (**in Armenian**)
20. «Yusaber», Gahire. 30 yunvar 1960 t', N 255 (**in Armenian**)
21. «Yusaber», Gahire. 28 mayisi 1960 t'., t'iv 49. (khmb. S. Z. «Ankakhut'iwn») (**in Armenian**)
22. «Yusaber», Gahire. 9 marti 1960 t'., N 288 (**in Armenian**)
23. «Yusaber», Gahire. 1 septemberi 1960 t'., N 137 (khmb.) (**in Armenian**)
24. «Yusaber», Gahire. 1 dektemberi 1960 t'., N 207 (**in Armenian**)
25. «Yusaber», Gahire. 25 mayisi 1961 t'., N 44 (khmb.) (**in Armenian**)
26. «Yusaber», Gahire. 23 marti 1961 t'., N 300 (**in Armenian**)
27. Yusaber», Gahire. 30 detemberi 1961 t'., N 231. (Khmb. «Khorhrdatsut'iwnner Nor taruan arrit'ov») (**in Armenian**)
28. «Yusaber», Gahire. 7 dektemberi 1962 t'. N 210 (**in Armenian**)
29. **Nazareants', St**. (1913). Yerker, h. A, T'iflis: tp. Aghayani, 428 ej (**in Armenian**)
30. **Nawasardean, V**. (1925). Dashnakts'ut'ean k'aghak'akan ughin, Gahire (**in Armenian**)
31. **Varandean, M.** (1912). Kron yev gitut'iwn, K. Polis, «Azatamart» tp., 168 ej (**in Armenian**)
32. **Vrats'ean, S**. (2007). Keank'i ughinerov (depk'er, demk'er, aprumner), h. Z, Peyrut': Hamazgayini «Vahe Set'ean» tp., 343 ej (**in Armenian**).
33. «Pravda», Moskva, 4 dekabrâ 1920 g. (**in Russian**).
34. https://www.aztadaly.com/archives/388406 (ditvel e, 21.05.25 t'.) (**in Armenian**)